ՕՍԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ (ԺԶ դ.)*

Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

1502 թ. շահ Իսմայիլի հիմնադրած կըզըլբաշների կիսաթեոկրատիկ տերությունը կոչված էր վերածնելու իրանական պետության ավանդներն ու նպաստելու ֆեոդալական միապետության զարգացմանը նոր պայմաններում։ Հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում նկատվող տեղաշարժերը թելադրում էին նոր պետության բնույթը, որն արտահայտվում էր նրա որդեգրած ներքին և արտաքին քաղաքականությամբ։

Շիիզմը հայտարարելով պետական կրոն, շահ Իսմայիլը ձեռք էր բերում բնակչության մեծամասնության համակրանքը։ Նորաստեղծ պետության գլխավոր ռազմական հենարան թրքախոս քոչվոր ցեղերը, որոնք մտել էին կըզըլբաշների օրդենի մեջ, ևս համակրանքով են ընդունում այդ որոշումը։ Նույնը պետք է ասել նաև հողագործ գյուղացիության մեծ մասի վերաբերյալ։ Սակայն վերջիններիս ավելի հրապուրում էին երիտասարդ շահի այն միջոցառումները, որոնք անմիջապես վերաբերում էին բնակչությունից գանձվող հարկերի թեթևացմանը։

Շուրջ 40 տարի առաջ Աղկոյունլու Ուզուն-Հասանի «ապօրինի» հայտարարած մի շարք հարկեր և տուրքեր, առանձին հրովարտակներով հայտարարվեցին արգելված։ Դա միաժամանակ հաստատում էր, որ չնայած Ուզուն-Հասանի օրոք աշխատավոր գյուղացիության ծանր վիճակը որոշ չափով հաջողվել էր թեթևացնել, սակայն դրությունը դնալով վատթարացել էր, դարավերջում դառնալով ավելի քան անտանելի։ 1503—1506 թթ. շահ Իսմայիլի հրապարակած հրովարտակներում շուրջ 12 անուն հարկեր ու տուրքեր հայտարարվեցին «արգելված պահանջմունքներ» կամ «արգելված դիվանական պարտավորություններ»[1]։ Սրանով շահը նպատակ ուներ մեղմացնելու բնակչության մեջ դարավերջում առաջացած բուռն դժգոհությունները։

Արագ կերպով կազմակերպելով նոր ռազմունակ բանակ, շահ Իսմայիլը կարողացավ կարճ ժամանակում տիրել Իրանի մեծ մասին, Ադրբեջանին, Հայաստանին ու Միջագետքին։ Համարձակ առաջխաղացման ընթացքում նա

---

* 1960 թ. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (№ 7—8) հրապարակելով նույն վերնագրով մի հոդված, փորձել էինք նոր աղբյուրների օգնությամբ պարզաբանել Արարատյան երկրում օտար տիրապետության սկզբնավորման հանգամանքներն ու ճշգրտել այնտեղ իշխող ամիրների ու հաքիմների ծագումն ու ժամանակագրական կարգը, այն հասցնելով մինչև XV դ. վերջը։ Ներկա հոդվածում քննում ենք XVI դ. Արարատյան երկրում իշխած կըզըլբաշ ամիրների ու բեկլարբեկիների և օսմանյան փաշաների ինքնության և ժամանակագրության հետ առնչվող հարցերը։

1 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, կազմեց Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն, պրակ Ա (ԺԵ—ԺԶ դդ.), Երևան, 1956, վավ. 8—10 (այսուհետև՝ «Հրովարտակներ» I)։